ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ

ԵՐԵՎԱՆ-2019

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ՈՐՈՇՄԱՄԲ ԱՄՍ. № 1, ԿԱՅԱՑԱԾ 06.03.2019
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
_____ Հ. ՍԱՖԵՎՈՍՅԱՆ

«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՆ

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն գիտական հրապարակումների էթիկան կարգավորում է հեղինակների, գրախոսների, խմբագրի և ընթերցողների միջև փոխհարաբերությունները՝ ելնելով արհեստավարժ մասնագետի բարեկիրթ վարքագծի դրսևորման պահանջից: Հրատարակչական էթիկայի բնագավառում «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսի (այսուհետ' Գիտական հանդես) քաղաքականությունը հիմնված է Գիտական հրապարակումների էթիկայի կոմիտեի առաջարկությունների և ստանդարտների վրա (The Committee on Publication Ethics – COPE):

II. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԽՄԲԱԳՐԻ ԵՎ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՐ

2.1. ***Հրապարակման մասին որոշում.***

Գիտական հանդեսի գլխավոր խմբագիրը (այսուհետ՝ Խմբագիր) պատասխանատվություն է կրում նյութի հրապարակման համար: Հրապարակման մասին որոշում կայացնելիս առաջնահերթվում են դիտարկվող աշխատանքի արժանահավատությունը և գիտական կարևորությունը:

2.2. ***Օբյեկտիվություն.***

Խմբագրի կողմից գնահատվում է ներկայացվող աշխատանքի բովանդակային համապատասխանությունը՝ ըստ գիտական նյութի առաջադիր պահանջի: Հեղինակի անձնային որակները, քաղաքական համոզմունքները, սեռային և կրոնական պատկանելությունը չեն կարող ազդել ներկայացվող նյութի գնահատմանը:

2.3. ***Գաղտնիություն.***

Գիտական հանդեսի խմբագիրը և խմբագրական խորհուրդն իրավունք չունեն այլ անձանց տեղեկատվություն հայտնել ընդունված նյութերի մասին՝ բացի հեղինակից, գրախոսներից, գիտական խորհրդատուներից և հրատարակչից:

Ընդ որում, դիտարկման ներկայացված նյութերում առկա ու դեռևս չհրապարակված տվյալները չի կարելի է օգտագործել անձնական հետազոտություններում՝ առանց հեղինակի գրավոր համաձայնության: Գրախոսման ընթացքում ստացված տեղեկությունը կամ գաղափարները պետք է գաղտնի պահվեն և չօգտագործվեն անձնական շահերի համար:

III. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԳՐԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

3.1. ***Գրախոսման կարևորությունը.***

Գրախոսումը խմբագրության, հեղինակի և գիտական հանրության միջև փոխգործողության անհրաժեշտ օղակ է. այն բնութագրում է գիտական գործունեության, գիտական փոխհարաբերությունների էությունը և ապահովում գիտական առողջ համագործակցությունը: Գրախոսումը խմբագրին օգնում է օբյեկտիվ որոշում կայացնելու հրապարակման մասին և հեղինակների հետ փոխգործողությունների միջոցով վերջիններիս աջակցելու՝ նպաստելով լավորակ աշխատանքի կազմակերպմանը:

3.2. ***Ճշտապահություն.***

Յուրաքանչյուր գրախոս պետք է հանձնառի նյութի քննությունը՝ ելնելով իր մտավոր և աշխատանքային հնարավորություններից՝ իրազեկելով այդ մասին խմբագրին:

3.3. ***Գաղտնիություն.***

Գրախոսման համար տրված նյութը ճանաչվում է որպես գաղտնի փաստաթուղթ: Այն չի կարելի հանրայնացնել և քննարկել այլ անձանց հետ, եթե չկա խմբագրի թույլատվությունը կամ համապատասխան լիազորությունը:

3.4. ***Օբյեկտիվություն.***

Գրախոսի գնահատականը պետք է լինի օբյեկտիվ ու անկողմնակալ: Հեղինակի անձը և նրա անձնային որակները նշող քննադատությունն անընդունելի է: Գրախոսի կարծիքը պետք է լինի հստակ ու փաստարկված:

IV. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

4.1. ***Նյութերին ներկայացվող պահանջները.***

Հեղինակները պետք է ներկայացնեն կատարված աշխատանքի արժանահավատ արդյունքներ, հետազոտության առարկայի օբյեկտիվ քննություն: Կարևորվում են ինքնատիպությունն ու կիրառված մոտեցման եզակիությունը: Աշխատանքում ներկայացվող տեղեկությունները պետք է լինեն հավաստի և անսխալ: Աշխատանքը պետք է բովանդակի աղբյուրագիտական հղումներ՝ հետագա վերարտադրության և այլ նյութերում հղումներ կատարելու համար: Կեղծ կամ սխալ պնդումները դիտվում են որպես ոչ էթիկական վարքագիծ և անընդունելի են:

<u>4.2.</u> Գրագողության զգուշացում.

4.2.1 Հեղինակները պետք է համոզված լինեն, որ ներկայացված աշխատանքը լիովին ինքնատիպ է, իսկ այլ հետազոտողների կամ գիտնականների աշխատանքները, դրանց հատվածները կամ գիտական գաղափարներն օգտագործելու դեպքում պետք է ուղեկցվեն համապատասխան մատենագիտական հղումներով կամ բացատրություններով:

4.2.2 Գրագողությունն ունի տարբեր ձևեր՝ ուրիշների աշխատանքը որպես հեղինակային ներկայացնելուց մինչև պատճենում կամ ուրիշների աշխատանքի էական մասերի բառափոխում (առանց հեղինակի նշման), ինչպես նաև ուրիշների հետազոտությունների արդյունքների նկատմամբ սեփական իրավունքների հայտարարում: Գրագողության բոլոր դրսևորումները ոչ էթիկական գործողություններ են, և անընդունելի գիտական հաղորդակցության մեջ:

<u>4.3.</u> Հրապարակումների բազմաքանակությունը, ավելորդությունը և միաժամանակությունը.

4.3.1 Հեղինակը չպետք է հրապարակի միևնույն հետազոտությանը նվիրված աշխատանք մեկից ավելի ամսագրերում, որպես ինքնատիպ հրապարակում: Միևնույն աշխատանքը մեկից ավելի ամսագրերի ներկայացնելն ընկալվում է որպես ոչ էթիկական վարքագիծ և անընդունելի է:

4.3.2 Հեղինակը չպետք է ներկայացնի նախկինում հրապարակված աշխատանք:

4.3.3 Այս կարգից բացառություն են կազմում արտասահմանում արդեն հրապարակված նյութի թարգմանությունն այլ լեզվով՝ հեղինակի և արտասահմանյան հրատարակչի փոխադարձ համաձայնությամբ՝ վերջիններիս նկատմամբ պահպանելով իրավաօգտագործողի իրավունքներն ու շահերը:

<u>4.4.</u> Սկզբնաղբյուրների ճանաչում.

Անհրաժեշտ է գնահատել այլ անձանց ներդրումը: Հեղինակները պետք է հղումներով նշեն այն հրապարակումները, որոնք որոշակի ազդեցություն կամ նշանակություն են ունեցել ներկայացված աշխատանքը կատարելու համար: Անձնական բանավոր հաղորդակցման ընթացքում կամ գաղտնի աղբյուրներից ստացված տվյալները (օրինակ՝ զրույցի, նամակագրության կամ երրորդ կողմի հետ քննարկման ընթացքում) չպետք է օգտագործվեն կամ ներկայացվեն՝ առանց սկզբնաղբյուրի գրավոր համաձայնության:

<u>4.5.</u> Հրապարակումների հեղինակ լինելը.

4.5.1 Որպես հեղինակներ կարող են հանդես գալ միայն այն անձինք, ովքեր նշանակալից ավանդ են ներդրել աշխատանքի մտահղացման, մշակման, կատարման կամ ներկայացված հետազոտության արդյունքների վեր հանման գործում: Բոլոր նրանք, ովքեր նշանակալից ավանդ են ունեցել, պետք է նշվեն որպես համահեղինակներ:

4.5.2 Հեղինակը պետք է վստահ լինի, որ հետազոտության մեջ էական ներդրում ունեցող բոլոր մասնակիցները ներկայացված են որպես համահեղինակներ, և որպես այդպիսիք ներկայացված չեն այն անձինք, ովքեր չեն մասնակցել հետազոտությանը: Համահեղինակությամբ ներկայացվող նյութին պետք է կցված լինի բոլոր հեղինակների հավանությունն ու նյութը հրապարակման ներկայացնելու համաձայնությունը հավաստող գրություն:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

I. Ընդհանուր դրույթներ..... 3

II. Էթիկական նորմեր խմբագրի և խմբագրական խորհրդի համար..... 3

III. Էթիկական նորմեր գրախոսների համար..... 5

IV. Էթիկական նորմեր հեղինակների համար..... 6